

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԲԱԺՆԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման սկադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Ակադեմիա) միջազգային համագործակցության և արտաքին կապերի բաժինը (այսուհետ՝ Բաժին) Ակադեմիայի կառուցվածքային ստորաբաժանում է, որը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Ակադեմիայի կանոնադրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված գործառույթներ է իրականացնում արտաքին կապերի ընդլայնման և միջազգայնացման ապահովման ուղղությամբ:

2. Բաժինը ստեղծվում, վերակազմակերպվում և գործունեությունը դադարեցնում է Ակադեմիայի կանոնադրությանը համապատասխան:

3. Բաժնի կանոնադրությունը հաստատում է Ակադեմիայի ռեկտորը:

4. Բաժինն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, այլ իրավական ակտերին, ինչպես նաև Ակադեմիայի կանոնադրությանը և սույն կանոնադրությանը համապատասխան:

5. Բաժինն Ակադեմիայի ռեկտորի, արտաքին կապերի գծով պրոռեկտորի հանձնարարությամբ, իր իրավասությունների շրջանակում, համագործակցում է Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, Հայաստանի Հանրապետությունում դիվանագիտական ներկայացուցչությունների, ինչպես նաև տեղական և միջազգային կազմակերպությունների հետ:

6. Բաժնի լիազորությունները սահմանվում են սույն կանոնադրությամբ, Ակադեմիայի ռեկտորի հրամաններով և այլ իրավական ակտերով:

II. ԲԱԺՆԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

7. Բաժնի գործունեությունը միտված է նպաստելու Ակադեմիայի միջազգային կապերի ընդլայնմանը, դրանց որակի և արդյունավետության ապահովմանը, եվրոպական կրթական համակարգին ինտեգրվելուն, գիտական, գիտաուսումնական կազմակերպությունների հետ համագործակցության զարգացմանն ու ընդլայնմանը:

8. Բաժնի նպատակները և խնդիրներն են՝

1) նպաստել Ակադեմիայի ինտեգրմանը համաշխարհային գիտական և կրթական գործընթացներին ու ծրագրերին,

2) պահպանել և ընդլայնել համագործակցությունը միջազգային հեղինակավոր կառույցների, արտասահմանյան բուհերի հետ,

3) նպաստել միջազգային պայմանագրերով և միջազգային կազմակերպությունների անդամակցությամբ պայմանավորված՝ Ակադեմիայի կողմից ստանձնած պարտավորությունների կատարմանը,

4) ձևավորել և զարգացնել համագործակցային կապեր Ակադեմիայի և Հայաստանի Հանրապետության տարբեր կրթական հաստատությունների, կորպորատիվ ընկերությունների, ինչպես նաև պետական կառավարման համակարգի տարբեր օղակների հետ,

5) խթանել և զարգացնել տեղական և օտարերկրյա կազմակերպությունների հետ կրթության և գիտության ոլորտում համագործակցությունը,

6) նպաստել Ակադեմիայի սովորողների, պրոֆեսորադասախոսական և վարչական կազմի փոխանակման ծրագրերին, Ակադեմիայի և միջազգային կառույցների միջև մշտական կապի ամրապնդմանն ու համագործակցության զարգացմանը,

7) կազմակերպել գիտական և ուսումնական համատեղ միջոցառումներ, սեմինարներ, աշխատանքային հանդիպումներ,

8) նպաստել ուսումնական գործընթացին՝ այն ապահովելով արտասահմանյան գիտական դպրոցների առաջավոր փորձի նյութերով և տեղեկատվությամբ,

9) մասնակցել կրթության որակի բարձրացմանն ու միջազգայնացմանը նվիրված միջոցառումներին և այլն:

III. ԲԱԺՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

9. Բաժնի գործառույթներն են՝

1) միջազգային պայմանագրերով և միջազգային կազմակերպությունների անդամակցությամբ պայմանավորված՝ Ակադեմիայի կողմից ստանձնած պարտավորությունների կատարման աշխատանքների համակարգումը, սահմանված կարգով հաշվետվությունների և վերլուծությունների կազմումը և ներկայացումը,

2) միջազգային պայմանագրերի մշակումը, այդ շրջանակում համապատասխան ընթացակարգերի ապահովումը՝ համագործակցելով Ակադեմիայի կառուցվածքային ստորաբաժանումների հետ,

3) տեղական և արտասահմանյան ուսումնական հաստատությունների հետ պայմանագրերի և համաձայնագրերի բանակցային գործընթացների կազմակերպումն ու իրականացումը,

4) կրթության և գիտության ոլորտում տեղական ու միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությամբ սեմինարների, համաժողովների և այլ միջոցառումների կազմակերպումը,

5) հանրապետությունում և արտերկրում իրականացվող գիտական համաժողովների, գիտաժողովների, տարբեր կազմակերպությունների կողմից ներկայացվող ծրագրերի տեղեկատվության տրամադրումը Ակադեմիայի պրոֆեսորադասախոսական կազմին, աշխատակիցներին, ասպիրանտներին և մագիստրանտներին,

6) օտարերկրյա պետություններից, միջազգային կազմակերպություններից ստացվող և օտարերկրյա պետություններ, միջազգային կազմակերպություններ ուղարկվող գրավոր նյութերի պատրաստման և թարգմանության աշխատանքների կազմակերպումը,

7) միջազգային գիտակրթական ծրագրերի, դրամաշնորհների, արտերկրի համալսարանների կողմից առաջարկվող գիտակրթական և ուսումնական ծրագրերի հայտերի մասին Ակադեմիայի անձնակազմին ու սովորողներին իրազեկելը,

8) Ակադեմիայի ռեկտորի և աշխատակիցների՝ օտար երկրներում իրականացվող վերապատրաստումների, աշխատանքային և պաշտոնական այցերի կազմակերպումը, անհրաժեշտ ընթացակարգերի ապահովումը,

9) օտարերկրյա պետություններ գործուղման մեկնած աշխատակիցների հաշվետվությունների ամփոփումը, դրանց արդյունքների ուսումնասիրությունը, համապատասխան առաջարկությունների ներկայացումը,

10) միջազգայնացման գործընթացի շրջանակում զարգացման ծրագրերի մշակման և իրականացման նպատակով առկա խնդիրների վերհանումը, կարիքների գնահատումը,

11) արտասահմանյան բարձրագույն գիտակրթական հաստատությունների հետ կապերի հաստատումը և ուսանողական ու գիտամանկավարժական գիտակրթական փոխանակման ծրագրերի իրականացումը,

12) գիտական համաժողովների, միջազգային գիտաժողովների, ուսումնական մրցութային ծրագրերի մասնակցության հայտարարությունների պարբերաբար տեղադրումը համացանցում և միջազգային համագործակցության ցուցատախտակում,

13) Ակադեմիայի պրոֆեսորադասախոսական կազմի գիտական հոդվածներն արտերկրի գիտական ամսագրերում հրատարակելու գործընթացին աջակցելը,

14) օտարերկրյա ուսումնական հաստատությունների, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների մասնագետներին ու դասախոսներին Ակադեմիայի ուսումնագիտական աշխատանքներին մասնակցելու հրավիրելը,

15) միջազգային համաժողովների, խորհրդակցությունների, սեմինարների կազմակերպումը և դրանց մասնակցելը,

16) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջազգային համագործակցության իրականացումը:

IV. ԲԱԺՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

10. Բաժնի կառավարումն իրականացնում է Ակադեմիայի ղեկավարը:

11. Բաժնի անմիջական ղեկավարումն իրականացնում է Բաժնի պետը, որը պաշտոնի է նշանակվում և պաշտոնից ազատվում է Ակադեմիայի ղեկավարի կողմից:

12. Բաժնի պետը հաշվետու է Ակադեմիայի ղեկավարին, արտաքին կապերի գծով պրոռեկտորին:

13. Իր գործունեության ընթացքում Բաժնի պետն առաջնորդվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության

օրենքներով, ինչպես նաև ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերով, Ակադեմիայի կանոնադրությամբ, սույն կանոնադրությամբ, Բաժնի պետի պաշտոնի անձնագրով:

14. Բաժնի պետը պատասխանատու է Բաժնի՝ սույն կանոնադրությամբ սահմանված գործառույթների պատշաճ իրականացման համար:

V. ԲԱԺՆԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹԻՎՆ ՈՒ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ

15. Բաժնի աշխատողների թիվն ու մասնագիտական կազմը սահմանում է Ակադեմիայի ռեկտորը:

16. Բաժնի աշխատողների գործառույթները, մասնագիտական որակավորումները, լիազորությունները, ինչպես նաև իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են աշխատողների աշխատանքային պայմանագրերով, պաշտոնների անձնագրերով և այլ իրավական ակտերով:

17. Անհրաժեշտությունից ելնելով՝ Բաժնի պետի առաջարկությամբ ռեկտորի կողմից Բաժնի կանոնադրական խնդիրների լուծման համար ստեղծվում են ժամանակավոր հանձնաժողովներ կամ աշխատանքային խմբեր: